ՀՀ Արմավիրի մարզի Ոսկեհատ գյուղական
համայնքի ղեկավար Գ. Ներսիսյան
2014 թվականի 2-րդ կիսամյակի և տարեկան կատարած աշխատանքների

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Մասնակցությամբ՝ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Փառանձեմ կարապետյանի, համայնքի ավագանու, գյուղապետարանի, միջնակարգ դպրոցի և համայնքի 125 բնակիչների.

21.01.2015թ.

1. Ոսկեհատ համայնքի բյուջեն կատարվել է 101,1 -% -ով
   ա) Հողի հարկ 101,6 %-ով
   բ) Գույքահարկ – 117,8 %-ով
   գ)Վարձակալական հ/հ –105,3 %-ով
   դ) սեփական եկամուտներ- 106,0 % -ով

2. Ներքոհիշյալ բոլոր աշխատանքները լսվել, քննվել և հաստատվել են ավագանու 15 նիստերի ընթացքում:

3. Կատարվել է փողոցների աղբի հավաքում և հեռացում ամիսը 4 անգամ:

4. Մշտական ուշադրության կենտրոնում են եղել մանկապարտեզի երեխաները, որոնք մշտապես ապահովվել են սննդով և ջեռուցմամբ, տարեմուտին կատարվել է Ամանորյա հանդես տրվել են նվերներ:

5. Կիսամյակի ընթացքում 2 անգամ հրավիրվել են տարբեր մասնագիտությունների բժիշկներ, որոնց կողմից անց է կացվել անվճար բուժ. սպասարկում, տրվել է անվճար ակնոցներ բոլոր կարիքավորներին, որի համար մեր խորին շնորհակալությունը տիկին Լարիսա Մուրադյանին:

6. Կիսամյակի ընթացքում վթարվել են 12 անգամ տարբեր փողոցների խմելու ջրագիծը և 12 փողոցների կոյուղագծերը, որոնք վերանորոգվել են համայնքի ջանքերով:

7. Ժամանակին կատարվել է ցորենի և գարու բերքահավաքը, կատարվել է աշնանացան:

8. Մայիսի 9-ին կազմակերպվել է Հայրենական մեծ պատերազմի և Լեռնային Ղարաբաղի պայքարի մասնակիցների մեծարման տոնահանդես և տրվել է նվերներ:

9. Ավագանիների որոշմամբ գյուղի անապահով ընտանիքներին հատկացվել է 4.500.000 դրամի օգնություն:

10. Մասնակցել ենք դպրոցի վերջին զանգի արարողությանը:

11. Ամբողջ ուսումնական տարին Հատկացվել է ուսանողական անվճար ավտոմեքենա ուսանողներին Երևան տանելու համար:

12. Գյուղի եվս 3 փողոցներում անց է կացվել գիշերային լուսավորություն:

13. Բոլոր նորածին երեխաների ընտանիքներին տրվում է միանվագ գումար:

Չնայած կատարված աշխատանքներին Ոսկեհատ համայնքը ունի իր կարևոր հիմանախնդրիները

1. Դպրոց տանող ճանապարհի ասֆալտապատման խնդիրը, որն ընթացքի մեջ է:

2. Լուրջ խնդիր է համայնքի որոշ փողոցների խմելու ջրագծերի հիմնանորոգման հարցը:

3. Առաջնահերթ խնդիր է մանկապարտեզի տանիքի վերանորոգման հարցը:

4. Լուրջ հիմնախնդիր է գյուղի մայր կանալի հիմնանորոգման հարցը:

5. Մնացել է չլուծված բուժ ամբուլատորիայի նոր շենքի կառուցման խնդիրը:

Ոսկեհատ համայնքի
ղ ե կ ա վ ա ր՝ Գ. Ներսիսյան